

# ԿՐՕՆԱԿԱՆ

ՀԼՅԱՍՏԱՆԵՆԵՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՆՑԵԼԼՆ.

(Շարունակում է)

Անցնելով երկոտասաներորդ դարուն, յորում կծաղկէր Ռուբինեանն Իշխանութիւն, կտեսնուի Հայկական Գաղութեան Երթալի Գարը, որոյ հիմը ի մետասաներորդ դարուն հաստատուած կհամարուի:

Յիշեալ (ԺԲ-րդ) դարուն մէջ Հայկական Գաղութեան ի նորոյ խնամուիլ և զարգանալն Եկեղեցական Նուիրապետութեան և Աւարչութեան յարտեջանից արդիւնք էր, որ երբ արտաքին յարձակումներէ և ներքին յուզումներէն կը յաջողէր ազատ և խաղաղ մնալ, ըստ կարիւրոյն անմիջապէս հնարներ կմտածէր և կհետեւէր Հայկական Գաղութեան զարգացման և տարածման:

Հարկ է դարձեալ ասել՝ զի այսպիսի աշխատութեանց հետեանքն Եկեղեցւոյ համար անհրաժեշտ և յաւէտ նպաստաւոր էր: Որով մերս Գաղութեան հարազատ և անխարդախ բարգաւաճումն մեծ օգուտ կտար Եկեղեցւոյ, և զուգակշիռ նպատակով միմեանց կարօտ լինելով՝ միշտ և հանապաղ կօգնէին իրերաց:

Չայս միշտ և հանապաղ քաջ զիտէին և զիտեն Հայաստանեայց Եկեղեցւոյ Հայրապետք և Պաշտօնեայք, ինչպէս որ Գրիգոր Գ. Պահլաւունի Աթուղիկոս ևս ըստ ներելոյ ժամանակին՝ զիտցաւ և յաջողեցաւ առանձին խնամք տանելով ճոխացնել զՀայկական Գաղութիւն:

Չնայելով սորին երկոտասարդական հասակին հանդամանաց և ստանձնած պաշ-

տօնին վսեմութեան և ծանրութեան, միանգամայն անչափահաս հասակը պատճառելով յառաջացած հակաթոռութեան յուզմանց՝ ըստ բաւականին խոհեմ կառավարութեամբ արդիւնաւոր հանդիսացաւ պաշտօնին մէջ:

Գրիգոր Պահլաւունի Աթուղիկոս տքնելով՝ միշտ իւր հարազատ եղբայր Ներսէս Հնորհալոյ գործակցութեամբ՝ նաև Եկեղեցւոյ ներքին պայծառութեան համար, ընդ նմին Հայրապետական Աթոռոյ բաւական ժամանակէ հետէ կրած աստանդականութիւնը զաղարեցնելոյ նըպատակաւ՝ Աթոռը ի Ալիլիկիա՝ մի Ատաին Տիկնոջ տիրապետած Հռոմկայն փոխադրեց, թէպէտ յառաջագոյն մինչև նոյն միջոցները մեծեւանդ ջանիւք շատ աշխատեցաւ այսր ի Ս. Լջմիածին փոխադրել:

Սորա օրով՝ Երուսաղէմի վերայ արշաւող Խաչակրութիւն և Ալիլիկոյ վերայ իշխող Ռուբինեանց ընդ Ատաինս ունեցած խնամութիւն՝ միջոց տուին Պապականութեան յարեւելս Հայոց հեռանթութիւն և յարարելութիւն հաստատելոյ, որով հետզհետէ սերտանալով՝ ըստ առածին՝ յօնք շինել ձեացնելով՝ Հայաստանի և Հայոց աչքը փորելոյ հետեոյ մի քարէկամ ևս յաւելացաւ: — Պապականութեան յատկութիւն և սեփական հրած նպատակին մոլի ջանից այս նուագի առաջին արդիւնքը երևեցաւ Երուսաղէմի մէջ, ուր Գրիգոր Աթուղիկոս (1141 թ. Փ.) ուխտի գնացած լինելով՝ զլեւաւորապէս Պապական Եկեղեցականներէն բազկացած մի մասնաւոր ժողովոյ մէջ՝ Հայաստանեայց Եկեղեցւոյ

վարդապետութեանց վերայ խնդիրներ կը յուզուին, և ինչպէս Յոյնք կերպէին, նոյնպէս Պապականութիւնն երազելով՝ միանգամայն համայն Վրիստ. եկեղեցեաց վերայ դատաւոր և քննիչ լինել՝ Հայոց Ակեղեցւոյ վարդապետութիւնքը քննութեանց ենթարկելոյ ձեռներէցութեան կելանեն, և արժանաւոր պատասխանիքը կատանան ի Վաթուղիկոսէն:

Թէպէտ այժմ ամենայն ուրիք պապականութեան ուղղութիւն և նպատակ բազմաց քաջայայտ եղած է, սակայն այն ժամանակներ տակաւին շատ մթութեան մէջ էր, և առ արտաքինս՝ փայլուն և ակնխառնիչ պատրուակեալ ցոյցերով զաշխարհ ամենայն՝ այս ինքն է՝ համայն Վրիստոնեայքը պատրել կնկրտէր, բայց և այնպէս՝ Հայաստանեայց Ակեղեցական Վարչութեան ամենատուար մասն՝ նոյնպէս ժողովրդեան կարևոր մասն նկատեցին պապականութեան խրատումները և սկսան զգուշանալ՝ թէ և ի վերին երեսս աշխարհավարական բարեկամութեամբ ևս կը վարուէին:

Սակայն պապականութեան միշտ նոր հնարներ սպառած չէին և չեն:

Մինչդեռ՝ Հայք իւրեանց ունեցած քաղաքական անկախութիւնը և իշխանութիւնը պաշտպանելոյ կտքնէին, դրացի ազգաց հետ ըստ կարելոյն սիրով և խաղաղութեամբ վարուելոյ կջանային, և Ակեղեցական Առերապետութիւնն՝ իւր բոլոր ոյժը տուած էր Հայկական Պարութիւնը մշակելոյ, Ակեղեցեաց բարեկարգ պայծառութիւնքը զարգարելոյ յօգուտ և ի բարչաւածանս ժողովրդեան, և հմուտ պաշտօնեայներ պատրաստելոյ, Պապա-

կանութիւնն ըստ ժամանակին՝ մտաւորական բարձր զարգացումն ունեցող եկեղեցականներ յաճախեցոյց ի Ալիկիա, որք իբրև բարեկամ ջանացին վանքեր շինել, դպրոցներ բանալ, իւրեանց զաղափարներով և Հայերէն լեզուաւ գրեանք՝ ճառեր գրել և տարածել, դաւանաբանական խնդիրներ յուզել, և արարողութեանց փոփոխութիւններ առաջարկել, միութիւն քարոզել, մի և նոյն ժամանակ քաղաքական խոստումներ կշռայլէին, և դրացեաց դէմ կգրգռէին յատելութիւն: Այս ամենը խիստ քօղարկեալ էին:

Այս միջոցիս Աերսէս Շնորհալին կը յաջորդէ ի տեղի եղբօրն և կօծուի Հայոց Վաթուղիկոս:

Լատինք (Պապականք) և Յոյնք՝ իւրաքանչիւրն իւր օգուտը շօշափելով և ըստ այնմ յափշտակուած՝ հեռզհեռ նոր ի նորոյ որոգայթներ լարելով՝ կյաճախէին Հայոց դէմ, ի ներքուստ զԱզգն և զԱկեղեցին երկպառակել կջանային, և յարտաքուստ՝ դրացի իշխանութիւնքը կը գրգռէին ընդ դէմ Հայոց:

Աերսէս Շնորհալի Հայրապետ այս ամենուն դէմ քաջ զինուած էր:

Ինչպէս իւր եղբօր գործակից եղած ժամանակէն կաշխատէր, նոյնը շարունակեց. նախ՝ ներքին միութեան և սիրոյ հրաւեր ուղղեց՝ իւրաքանչիւր անձի՝ կարգի և աստիճանի հարկ եղած իրաւունք և պարտականութիւնքը ըստ արժանւոյն յիշեցնելով և զնոսա սիրաշահելով:

Ի պայծառութիւն Ազգի և Ակեղեցւոյ ինչ որ ձեռնարկած էր՝ անխոնջ յառաջ տարաւ:

Նկեղեցական ժամակարգութեան բարեկարգութեան հետեւեցաւ, երգեցողութեանց կանոնաւորութիւնը և միակերպ ներդաշնակութիւնը արդիւնաւորեց:

Հայաստանեայց Նկեղեցւոյ և ազգային բարեկարգութեանց և անկախութեան այնքան հետամուտ և նախանձախնդիր եղաւ՝ որ արարողութեանց առանձին ուշադրութիւն տուաւ, և ազգային և եկեղեցական յասկութեանց և ապահովութեան իբրև հզօր միջոցներ նկատեց և դարգացոյց զնոսա, և կջանայր յամենայնի միշտ խտիր դնել և յաւելուլ, նոր սպըրդած ինչ ինչ օտար երգերը արդելեց, և ազգային և կրօնական երգեր շարադրեց և տարածեց, որոց շատը այժմ Նկեղեցւոյ մէջ կերգուին: Նւ ժողովրդեան բարեպաշտութեան յարատեւութեան և միշտ հոգեվառ եռանդը արթուն պահելոյ իբրև յարմար միջոցքսան և չորս տունէ բաղկացեալ մի համառօտ՝ բայց իմաստալեց աղօթք յօրինեց քսան և չորս ժամու վերայ բաժանելով, որպէս զի հասարակ ժողովուրդն անգամ դիւրութեամբ սերտելով և ուսանելով՝ միշտ զՆստուած յիշէ և առաքինութեամբ ձոխանայ:

Իսկ Հայկական Ղազրութեան համար ունեցած ջանքը և եռանդը հասկացնելոյ համար բաւական է յիշել, զի ամեն կարգի և աստիճանի ժողովրդեան մէջ ընթերցասիրութիւնը տարածելոյ և դպրութիւնը զարգացնելոյ համար՝ բաց ի Նստուածաբանական, մեկնական, պատմական և այլ ուսումնական աշխատութիւններ ինքնին պատրաստելոյ և պատրաստել տալոյն, նա և հետաքրքրական հանելուկներ, մանր վէպեր աշխատասիրեց և ցրուեց, որ-

պիսիք յաւէտ ժողովրդեան ատորժելի են և նոցա ուշադրութիւնը կշարժեն, հետաքրքրութիւն կպատճառեն և ընթերցասիրութեան կհրապուրեն:

Թէպէտ տպագրութիւն չկար՝ որ այս ամենը աւելի դիւրութեամբ և փութով տարածուէին և ընդհանրանային ի ժողովրդեան, բայց և այնպէս՝ ի ժամանակին բաւական տարածուեցան և մեծ օգուտ բերին:

Ներսէս Շնորհալուոյն ընթացք և նրպատակ շատ գովելի և հանձարեղ էր, թողում յիշել որքան ազգասիրական՝ բարենախանձ և կրօնասիրական լինելը:

Նա կարողացաւ միանգամայն ներքին սէր և միութիւնը ապահովել, և խաղաղասիրական ոգւով և աշխարհավարական փորձառու հմտութեամբն՝ քաջ գիտցաւ թէ Յունաց և թէ Ատախնաց հետ բաւական ժամանակներ լաւ վարուիլը, այնքան՝ որ դրացի իշխանութիւնք և ազգեր անգամ՝ որք Մահմետական էին՝ միշտ մեծ ակնածութիւն և պատկառանք վզաւով սիրեցին զնա:

Սակայն՝ ինչպէս քանիցս յիշեցինք, Յունական ատելութիւնն և մոլեռանդութիւնն՝ երբ յարմար միջոց գտնէր՝ կարող էր երկար համբերել և թողուլ որ Հայրապետք մեր և Հայք խաղաղ մնան և օր ըստ օրէ զարգանան:

Եյս նոցա համար քանի՜ մեծ ոճիր կը լինէր:

Ուստի՝ երբ Շնորհալուն վերոյիշեալ ջանից մէջ անխոնջ կպարսպէր և արդիւնաւոր կհանդիսանայր, Ար Մանուէլ կայսրն Յունաց՝ — որ և ուղղակի և անուղղակի միջոցներով կջանայր Յունական

բազմադարեայ ջանից հաւատարիմ գործակից լինել, և արդէն Ներսիսի հետ առանձին յարաբերութիւն ունեցած էր իւր փեսային միջոցաւ, և Շնորհալոյն սիրով և խոհեմութեամբ փարուելէն այնպէս կկարծէր՝ որ նորին ձեռամբ կարող էր Յունական նպատակը արդիւնաւորել, և սկսած էր Պահլաւունի Գրիգոր Աթուղիկոսի օրէն նոր խլրտումներ գաղտնաձածուկ գործել և ինչ ինչ խնդիրներ կը յուզէր և գրութեամբ կառաջարկէր, յորոց — մի թուղթ յատուկ պատգամաւորներով թէ և առ Պահլաւունին ուղղած էր, սակայն նա վախճանած լինելով նորա յաջորդն եղող Շնորհալի Ներսէս շայրապետ կստանայ, և արժանաւոր պատասխանը կփոխարինէ :

(Շարունակելի)  
Վ. Վ. ՄԱՆԿՈՒՆԻ:

**Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն**

**Ե Կ Ե Ղ Ե Յ Յ Ի Ք**

**Վ Լ Ե Ղ Ե Ր Շ Ե Պ Ե Տ Ի Բ Ե Ղ Ե Ի Ի**

(Շարունակելի)

Եյս սենեկաց ետեւէն հաստատուն որմով պարսպեց Տրդատայ ասացեալ դրունէն մինչև նոր պարիսպը. որու արևմտեան բրդի վրայ շինեց ամառանոց և դիտարան դէպ ի դաշտը, շուկայի բոլոր խանութները նորոգելով, որոց մէջ վարձով կնքստին բնակիչք:

Նկեղեցւոյ շրջապատը խցերի յառաջ հորեր բանալ տուաւ ընդերկրեայ ծանադարհաւ մէկ մէկի հաղորդելով Փիլիպպոս Աթուղիկոսի բաց արած հորերի

հետ՝ գիճութիւնը ցամաքեցնելու համար. որով Սառը-քանքանի ջուրը բաւական յաւելացաւ ընդերկրեայ ջրերի միատեղ ժողովուելով, և Նկեղեցւոյ յատակը ու միաբանից սենեակները բաւականին ցամաքեցան խոնաւութենէ:

Սիմէօն Աթուղիկոսի այլ ամեն արարքը Աթոռապատկան գիւղերում, և հոգածութիւնքը նորա բոլոր կալուածքը սեպհականերու, զբաժնէն աւանիկ առանձին առանձին գլխով իւր ջամբումատենին մէջ. մենք Աթուղիկէ Նկեղեցւոյ այս ստորագրութեան մէջ այն ամենը միայն զրեցինք, ինչ որ թողուց գործք և արարք Նկեղեցւոյ և մենաստանի մէջ. որոց թէ թերութիւնք էլ մնացել էին, այն ևս լրացուց Ղուկաս Աթուղիկոս: Եփսոս որ Սիմէօն Աթուղիկոսից ետքն եկող կաթուղիկոսք ինչպէս և Ղուկաս՝ իւրեանց արարքը զրել չեն ջամբուի մէջն ի յիշատակ, թէ և յիշատակի արժանի գործք չունեցան Ղուկասի յաջորդները:

Ղուկաս յաջորդելով Սիմէօնին, իւր նախորդի բարի գործքէն ի բարի նախանձ շարժելով, Նկեղեցւոյ և Մենաստանի միւս հնացած տեղերն էլ ինքը նորոգեց. Տաճարի որմոց շրջապատ չորս կարգ քարինքը ի ներքուստ աստիճանների վերէն փոխել տուաւ, որոնք ժամանակի հնութեանէն մաշուած և ի տեղիս տեղիս աւերուած էին. որու շինութեան արձանագիրը դրուած է արտաքուստ Եւագ խորանի կիսաբոլորակ որմոց մէջ յարեւելից, 1784 թուին:

Նկեղեցւոյ արտաքին շրջապատ սալայատակը շինել տուաւ երկրորդ տարին.